

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ի Ր

Երուսաղեմ, 30 Սեպտ. 1980

Ն. Ս. Օծուրիւն Տ. Տ. Վազգէն Ա.
Կարողիկոս Ամենայն Հայոց
Ս. Էջմիածին

Ձեր Գահակալութեան եւ Օծման Բան-
հինգամեակի բարեբաօսիկ առիթով, Ձերդ
Սուրբ Օծութեան կը ներկայացնենք Մեր, Ս.
Յակոբեանց Միաբանութեան եւ համայնքին
սրտագին եւ յարգալից շնորհաւորութիւննե-
րը, երկուր եւ Բազումը կեանքի եւ Մայր Ա-
բողոյ ու Մայր Հայրենիքի անսասանու-
թեան ու բարգաւաճման մտղբանգներով:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏՆԵՐԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղեմի

Ե Կ Ե Ղ Ե Տ Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

● Ուր. 4 Յուլիս. — Նախատեսակին ի Ս.
Յակոբ Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ.
Հայրիկ Արքեպոս. Ասլանեան:

● Եր. 5 Յուլիս. — Ս. Եկոսասն առաքելոցն
Քրիստոսի եւ Պողոսի՝ երեսասներոց առաքելոյն:
Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի
Ս. Պողոսի վերնամասերան մէջ: Ժամարարն
էր Արժէնթինէն հիւրաբար Ս. Աթոռ ժամանած
Հոգշ. Տ. Տաթև Մ. Վրդ. Ղարիպեան:

● Կիր. 6 Յուլիս. — Բարեկենդան Վարդավառի
պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս.
Յարութիւն, մեր վերնամասերան մէջ: Ժամա-
րարն էր Հոգշ. Տ. Համբարձում Արղ. Քէշիշեան:

● Ուր. 11 Յուլիս. — Նախատեսակը պաշ-
տուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին
մասերան մէջ, նախագահութեամբ Լուսարա-
րապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպոս.ի:

● Եր. 12 Յուլիս. — Յիսուսակ Տապանակին:
Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածին
մասերան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեան
Վրդ. Ղարիպեան:

— Այլակերպութեան մեծահանդէս նախա-
տեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ:
Հանդիսապետն էր Գերշ. Տ. Շահէ Արքեպոս.:
Յետոյ՝ Տէր ողորմեան երգուեցաւ ծննդիքի
եւ կատարուեցաւ Տեսնունդբոբ դահակալութեան
նուիրուած հանդիսութիւն:

— Գերշ. Սրբազանը նախագահեց նաև ի-
րիկնադէմին Մայր Տաճարին մէջ պաշտուած
«Եկեացէի» եւ Հսկման կարգերուն:

● Կիր. 13 Յուլիս. — ՎԱՐԴԱՎԱՌ (Տօն Այլա-
կերպութեան Տեսն): Օրուան հանդիսաւոր Ս.
Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին
վրայ մատոյց Գերշ. Տ. Շահէ Արքեպոս. Անէմ-
եան եւ քարոզեց Պայծառակերպութեան մեծ
խորհուրդին շուրջ:

— Գերշ. Տ. Նորայր Արքեպոս. նախագահեց
Կէսօրէ ետք, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին
մէջ կատարուած «Անդատանին»:

● Բշ. 14 Յուլիս. — Յիսուսակ մեռելոց: Ս.
Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի
Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարո-
զեց Հոգշ. Տ. Ոսկի Արղ. Որդիքեան, բնաբան
ունենալով օրուան ձաշու Աւետարանէն. «Զի
օրէնքն ի ձեռն Մոյսիսի տուան, շնորհք եւ
նշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ե-
ղեն» (Յովհ. Ա. 17): Ս. Պատարագէն ետք կա-
տարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, նա-
խագահութեամբ Գերշ. Տ. Շահէ Արքեպոս.ի:

● Ուր. 18 Յուլիս. — Նախատեսակին ի Ս.
Յակոբ Նախագահեց Գերշ. Տ. Շահէ Արքեպոս.:

● Եր. 19 Յուլիս. — Ս. Թաղեոսի առաքելոյն
մեռոյ եւ Սանդիսոյ կուրիին: Ս. Պատարագը մա-
տուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր
Հոգշ. Տ. Վանիկ Արղ. Մանկասարեան:

● Կիր. 20 Յուլիս. — Ս. Պատարագը մա-
տուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան
մասերան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բար-
սեղ Արղ. Գալէմտէրեան:

● Եր. 26 Յուլիս. — Որդոց եւ բռանց Ս.
Գրիգորի Լուսաւորչին: Ս. Պատարագը մատուց-
ուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ.
Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան:

● Կիր. 27 Յուլիս. — Ս. Պատարագը մա-
տուցուեցաւ ի Ս. Յակոբ: Պատարագեց եւ քա-
րոզեց Շիքակոյէն հիւրաբար Ս. Աթոռ ժամա-
նած Հոգշ. Տ. Ժիրայր Վրդ. Թաշճեան:

● Եր. 2 Օգոստ. — Ս. Պատարագը մա-
տուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր
Բանատայէն հիւրաբար Ս. Աթոռ ժամանած
Արժ. Տ. Սեղբաք Քհյ. Խաչատուրեան:

● Կիր. 3 Օգոստ. — Ս. Պատարագը մատու-
ցուեցաւ ի Ս. Յարութիւն, վերնատան մեր
մասերան մէջ: Ժամարարն էր, Մարտիրոսայէն
հիւրաբար Ս. Աթոռ ժամանած Հոգշ. Տ. Վաչէ
Մ. Վրդ. Իգնատիոսեան:

● Եր. 9 Օգոստ. — Հայրապետաց Արամասի եւ
Կիրիլի: Արևմտեան Եւրոպայի Թեմին Կաթո-
ղիկոսական Պատուիրակ եւ Փարիզի Առաջնորդ
Գերշ. Տ. Սերոյբէ Արքեպոս. Մանուկեան հան-
դիսաւոր Ս Պատարագ մատոյց Ս. Գլխադիր
մասերան մէջ եւ քարոզեց, բնաբան ունենա-
լով «Եթէ մոռացայք զքեզ, Երուսաղէմ ...
հանրածանօթ համարը Սաղմոսին»:

● Կիր. 10 Օգոստ. — Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Շնորհք Արքեպս. Գալուստեան հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Մայր Տաճարի Աւագ Սեղանին լրայ և քարոզեց, բնարան ունենալով՝ Վերիտան ի մէջ մեր յայտնեցաւ: Սոյն քարոզք լոյս տեսաւ Ամատարագի Բարեպետի մէջ (Յուլիոս-Հոկտեմբեր 1980): Քարոզէն ետք, Ամեն. Տ. Եղիշէ Ս. Պատրիարքը նախագահեց Ս. Աթոռոյս հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հանգստեան պաշտամունքին:

● Եր. 16 Օգոստ. — Ս. Կրկնորի Ասուածարանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամաբարն էր Ս. Էջմիածնէն հիւրարար Ս. Աթոռ ժամանած Արժ. Տ. Մովսէս Քնյ. Ղաղարեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ տեղափոխութեան արարողութիւնը, նախագահութեամբ Ամեն. Տ. Շնորհք Ս. Պատրիարք Նոր:

● Կիր. 17 Օգոստ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գարուբիւն, մեր վերնատան մատրան մէջ: Ժամաբարն էր Ս. Էջմիածնէն հիւրարար Ս. Աթոռ ժամանած Արժ. Տ. Յովհաննէս Աւագ Քնյ. Մարութեան: Քարոզեց Ամեն. Տ. Շնորհք Պատրիարքը, բնարան ունենալով՝ վեհտարանեցէք օր ըստ օրէ զվերկուսիւն Տեսան Սաղմոսին խօսքը:

● Բշ. 18 Օգոստ. — Այսօր սկսաւ Ս. Կոյսի վերափոխման տունը կանխող ամէնօրեայ հանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը, Գեթեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին լրայ:

● Եր. 23 Օգոստ. — Էփեսոսի Ս. Ժողովոյն (431): Նոյն սրբավայրին մէջ պատարագեց շոգչ. Տ. Սեան վրդ. Ղարկեան:

● Կիր. 24 Օգոստ. — Բարկեղղան Ս. Ասուածածնի պահոց: Նոյն սրբավայրին մէջ պատարագեց շոգչ. Տ. Բարսեղ Արչ. Գալուստեան:

● Ուր. 29 Օգոստ. — Նախատունակը պաշտուեցաւ Մայր Տաճարին Կից Ս. Էջմիածին մատրան մէջ: Հանդիսապետն էր Ամեն. Տ. Շնորհք Պատրիարք Կ. Պալոսոյ:

● Եր. 30 Օգոստ. — Տօ՛ւ Շողկապի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տիրամօր Ս. Գերեզմանին լրայ ի Ս. Աստուածածին: Ժամաբարն էր շոգչ. Տ. Վանիկ Արչ. Մանկասարեան:

— Կէսօրէ ետք, Ամեն. Տ. Շնորհք Պատրիարք Գալուստեանի գլխաւորութեամբ, Միարանուսիւնը ինքնաշարժերով իջաւ Գեթեմանի ձոր ու շարժապետով մատք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատունակը:

— Ամենապատիւ Սրբազանը նախագահեց նաև իրիկնադէմին նոյն Տաճարին մէջ կատարուած սեկեցէի և Հսկման արարողութիւններուն, որոնց յաջորդեցին գիշերային և առաւօտեան ժամերգութիւններ, տեւելով մինչև ժամը 10:

● Կիր. 31 Օգոստ. — ՎերԱՓՈՅՈՒՄԵՆ Ս. ԱՍՏՈՒԱՅԻՆՆԻՒՆ. Առաւօտուն, Ամեն. Տ. Շնորհք Պատրիարքի գլխաւորութեամբ, Միարանուսիւնը ինքնաշարժերով իջաւ Գեթեմանի ձոր ու շարժապետով մատք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Ամեն. Սրբազանը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին լրայ և քարոզեց, բնարան ունենալով՝ Վեհտարանեցէ անձն իմ զՏէր և Ս. Պատարագէն ետք նախագահեց Վեհաստանին:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Վեհաստանին և նախատունակին նախագահեց շոգչ. Տ. Սեան վրդ.:

● Բշ. 1 Սեպտ. — Տրեմակ մեռնոց: Մայր Տաճարի Ս. Գլխադիր մատրան մէջ պատարագեց շոգչ. Տ. Ասպետ վրդ. Պալեան: Ապա, Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեանի նախագահութեամբ, կատարուեցան հոգեանգոստեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ և ապա Գալուստէ՝ Երանաշնորհ Տ. Կիրեղ Պատրիարք Նոր շիրմին լրայ:

● Կիր. 7 Սեպտ. — Ը. օր Վերափոխման: Այսօրուան Ս. Պատարագը, որ կը մատուցուէր Ս. Գարուբեան Տաճարի վերնատան Երախաւոր Ս. Աստուածածին մատրան մէջ, մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին լրայ, ժառանգաւոր սաներ շարժուան մը արձակուրդով Գալուստի և Տիրերիոյ տնօրինական սրբավայրերու այցելութեան մեկնած ըլլալուն: Ըստ սովորութեան, պատարագիչն էր Ս. Գարուբեան Տաճարի Տեսուչ շոգչ. Տ. Վաղարշ վրդ. Խաչատուրեան:

● Բշ. 8 Սեպտ. — Նախատունակին ի Սուրբ Թաղոս նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.:

● Գշ. 9 Սեպտ. — Ս. Յովակիմայ եւ Աճնայի: Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովակիմի գերեզմանին լրայ: Ըստ սովորութեան, պատարագիչն էր Տաճարին Տեսուչը՝ շոգչ. Տ. Հայրիկ Արչ. Գալուստեան:

● Եր. 13 Սեպտ. — Ս. Թովմայի առաքելոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամաբարն էր շոգչ. Տ. Վանիկ Արեղայ:

— Նախատունակին ի Ս. Թաղոս նախագահեց Գերշ. Տ. Տանէ Արքեպս.:

● Կիր. 14 Սեպտ. — Գիւն Գօսոյ Ս. Ասուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին լրայ: Ժամաբարն էր շոգչ. Տ. Անուշա. ան վրդ. Զոյլանեան: Երթ ուղարձի թափօրները գլխաւորեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան:

● Եր. 20 Սեպտ. — Նիկիոյ Ս. Ժողովոյն (325): Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամաբարն էր շոգչ. Տ. Ասպետ վրդ. Պալեան: — Նախատունակին ի Ս. Թաղոս նախագահեց Գերշ. Տ. Տանէ Արքեպս.:

● Կիր. 21 Սեպտ. — Ինուոն Ս. Աստուածածնի և Բարեկեցողան Ս. Խաչի պահոց: Առաւօտուն, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր խմբաւորութեամբ մեկնեցան Գեթեմանի ձորը ու շրջափառուի թափօրով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տանար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց և շնորհազարդ պայծառացո զգաւաղան իշխանութեան մերոյ հայրապետին բնաբանով քարոզեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:

● Եր. 27 Սեպտ. — Տօն եկեղեցւոյ ի ճաւաղակա Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Հայրիկ Արղ. Գալայճեան:

— Խաչվերացի մեծահանգէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. ի, որ ապա Ս. Խաչի մատունքը թափօրով փոխադրեց Աւագ Սեղան:

— Գիշերակազմին Մայր Տանարին մէջ կատարուեցան տեղեկութիւն և Հսկման կարգեր: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Կիր. 28 Սեպտ. — Տօն ՎԵՐԱՅՄԱՆ ՍՐԲՈՑ ԽԱՉԻՆ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տանարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան: Ս. Պատարագէն ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Մեղիգոնեան բարերար եղբարց հոգիներուն համար: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

— Կէսօրէ ետք, Մայր Տանարին մէջ տեղի ունեցաւ Խաչվերացի մեծ Անշատանը, ի ներկայութեան բաղձաթիւ ժողովուրդի: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը՝ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

● Բշ. 29 Սեպտ. — Յիւսակ մեղեկոց: Մայր Տանարի Ս. Գլխադիր մատրան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Համբարձում Արղ. Քէշիշեան: Ապա, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեանի նախագահութեամբ կատարուեցան հանգստեան կարգեր, նախ Մայր Տանարին մէջ և ապա գաւթի Նորանշնորհ Տ. Կիւրեղ Պատրիարք Զօր շիրմին վրայ:

● Եր. 4 Հոկտ. — Տօն Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան:

● Կիր. 5 Հոկտ. — Բարեկ. Վարգայ Ս. Խաչի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տանարի վերնատան մեր մատրան մէջ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Արղ. Երպէթճեան:

● Ուր. 10 Հոկտ. — Նախատօնակը պաշտուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Արիս Եպս.:

● Եր. 11 Հոկտ. — Ս. Գէորգայ զօրավարին:

Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ վանքի եկեղեցւոյ մէջ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Հայրիկ Արղ. Գալայճեան: Ս. Պատարագէն ետք, Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ղպտոց Հոգշ. Տ. Տեղէն: Երթ ու զարձի թափօրները գլխաւորեց Գերշ. Տ. Արիս Եպս.:

— Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Արիս Եպս. Երվանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շրջափառուի մուտք գործեց Ս. Յարութեան Տանար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ վերնատան մեր մատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբանշնորհաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տանարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան:

● Կիր. 12 Հոկտ. — Տօն Վարգայ Ս. Խաչին: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ապա, Գերշ. Տ. Արիս Եպիսկ. մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և քարոզեց, բնաբան ունենալով օրուան ծաշու Աւետարանէն տեղեկութիւն նշան Որդւոյ Մարդոյ յերկինս (Մատթ. ԻԳ. 30): Քարոզէն ետք, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վաղգէն Ա. ի օժման 25րդ տարեդարձի առթիւ կատարուած շնորհակցանական Մայրթանքին:

● Եր. 18 Հոկտ. — Ս. 72 աւակերտացի Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի ներքին գաւթի Ս. Գէորգայ սեղանին վրայ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Ապետ Վրդ.:

● Կիր. 19 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Ոսկի Արղ. Որդիքեան:

— Այսօր տեղի ունեցաւ Ռեմէի Ս. Գէորգ վանքի տարեկան ուխտադնայութիւնը: Պատարագեց Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան և քարոզեց Գերշ. Տ. Արիս Եպիսկ. Երվանեան, ներկայացնելով կեանքն ու մարտիրոսական մահը Ս. Գէորգի:

● Ուր. 24 Հոկտ. — Թարգմանչաց հանդիսաւոր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողարեան:

● Եր. 25 Հոկտ. — Ս. Թարգմանչաց վարդապետաց մերոց (Տօն ազգային եւ եկեղեցական): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարին մէջ, Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց և մէջ, Աւագ Սեղանին վրայ: Պատարագէն նուշաւան Վրդ. Զղջանեան: Ս. Պատարագէն ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ Կիւրեղեան բարերար գերդաստանի նշնորհաց հոգիներուն համար: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

● Կիր. 26 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, վերնատան մեր մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Արղ. Մանկասարեան:

● Եր. 1 Նոյեմ. — Ս. Զորից Աւետարնչացն: 20րդ տարին ըլլալով, այսօրուան Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր, փոխան Ս. Յարութեան գաւթի Ս. Յովհ. Աւետարանչի մատրան մէջ, Տաճարի նորոգութեանց պատճառաւ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան:

● Կիր. 2 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան: Վէր ողորմեայի պահուն, ներկաներէն խնդրուեցաւ աղօթել ազատ արձակմանը համար Ս. Ուխտիս Միաբան Հոգշ. Տ. Մանուէլ Վրդ. Երկաթեանի, որ Պոլիս, իր պարագաներուն տուած այցելութենէ վերադարձին, ձերբակալուած էր տեղական իշխանութեան կողմէ:

— Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ ևս մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագից համայնքի նոր Հովիւը՝ Հոգշ. Տ. Հայրիկ Արղ. Գալայեան:

● Բշ. 3 Նոյեմ. — Ս. Յովսէփայ Ասուածափօրն: Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթեմամնի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ժամարարն էր Արժ. Տ. Ներսէս Քչյ. ձէպէճեան:

● Եր. 8 Նոյեմ. — Ս. Երկաստան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բարսեղ Արղ. Գալէմտերեան:

— Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը Վերաշափառուով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի և Դիւտ Խաչի այրի ուխտերէն ետք, վերջնոյ կից Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ պատուեցան ժամերգութիւն և նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Արժիար Արեղայ:

● Կիր. 9 Նոյեմ. — Գիւն Սաչի: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորիչ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Արժիար Արղ. Տէմիրճեան: Ապա կազմուեցաւ մեծահանդէս թափօր, որ նախ իջաւ Գիւտ Խաչի այրը և յետոյ բարձրացաւ Ս. Գերեզմանի շրջափակը, երիցս դարձմամբ Սրբափայլին շուրջ: Հանդիսապետ Գերշ. Տ. Շահէ Սրբազան ամպոլանի տակ և Կենաց Փայտի մասունքն ի ձեռին, կ'օրհնէր ներկայ ժողովուրդը: Պատանատեղւոյ կարգէն և ռաչի քս Քրիստոս շարականի երգեցողութենէն ետք, թափօրը վերջացաւ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ:

● Եր. 15 Նոյեմ. — Տօն Ամենայն Սրբոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր, Ժամարարն էր Հոգշ. Տ. Մեսրոպ Արղ. Մուրթաքեան:

● Կիր. 16 Նոյեմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատրան մէջ: Ժամարարն էր Արժ. Տ. Ներսէս Քչյ. ձէպէճեան:

● Ուր. 21 Նոյեմ. — Ս. Հրեշտակապետաց նախատօնակը պաշտուեցաւ համանուն եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր հիւրարար Ս. Աթոռ ժամանած Աւտարալիոյ Կաթ. Պատուիրակ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գաղանճեան:

● Եր. 22 Նոյեմ. — Տօն Ս. Լեւոնակապետաց Գարիէլի եւ Միխայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան: Ս. Պատարագէն ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Ս. Աթոռոյ բարերարուհի Աղանի ձէպէճիճեանի և պարագայից հոգիներուն համար, նախագահութեամբ Գերշ. Տ. Գարեգին Սրբազանի: Յետոյ Միաբանութիւնը պատուաւորուեցաւ վանուց Տեսչարանին մէջ, Տեսուչ Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեանի կողմէ:

● Կիր. 23 Նոյեմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ դարձեալ ի Ս. Հրեշտակապետ: Պատարագեց, ըստ սովորութեան, վանուց Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան:

● Եր. 29 Նոյեմ. — Անդրէի եւ Փիլիպպոսի առաքելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր, Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

● Կիր. 30 Նոյեմ. — Բարեկեղան Յիսնակի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան:

● Գշ. 3 Դեկտ. — Ընծայման հանդիսաւոր նախատօնակին ի Ս. Յակօր նախագահեց Գերաշնորհ Տ. Կիրեղ Եպիսկոպոս:

● Եշ. 4 Դեկտ. — Ընծայումն Ս. Ասուածամին: Առաւօտուն, Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթեմամնի ձորը ու Վերաշափառուով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը, որ ապա նախագահեց ազգային բարերար Կիւլապի Կիւլպէնիկեանի և Կիւլպէնիկեան գերզատանի նշնցերոց հոգւոյն կատարուած տարեկան հոգեհանգստեան պաշտամունքին:

● Եր. 6 Դեկտ. — Գրիգորի Սեանչե աղօթիմն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Արեղայ Երպէթեան:

● Կիր. 7 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբ, Աւագ Թորանի վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Արեղայ:

● Ուր. 12 Դեկտ. — Նախատօնակը պաշտուրեցաւ Ս. Յակոբ: Հանդիսապետն էր Գեորգիանի Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

● Եր. 13 Դեկտ. — Առաջ. Թաղէտի եւ Բարդղիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխազրի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բարսեղ Արզ. Գալէմտէրեան:

● Կիր. 14 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբ, Ս. Աճաճնայ Խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրզ. Զղջանեան:

● Դշ. 17 Դեկտ. — Նախատօնակին Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս.:

● Եշ. 18 Դեկտ. — Տօն Ս. Հարցն եղիպացոց: Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ պատարագեց, ըստ սովորութեան, Խոստովանահայրը՝ Հոգշ. Տ. Մաշտոց Վրզ. Բարխուսեան:

● Եր. 20 Դեկտ. — Ս. Նիկողայոսի Սքանչկա գործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխազրի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրզ. Յովակիմեան: Վերաբերուեմը կատարուեցաւ Ս. Նիկողայոսի Սեղանին վրայէն, ի դաւաճ Ս. Յակոբայ:

— Այսօր ըլլալով անուան տօնը Եաֆայի մեր վանքին ու եկեղեցիին, Գերշ. Տ. Կիրեղ Եպս. ի գլխաւորութեամբ, քանի մը վարդապետներ, դպրոցականներ եւ երգեցիկ երիտասարդներ, մեկնեցան Եաֆա, ուր տեղւոյն փոքրաթիւ գաղութի ներկայութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ: Ս. Նիկողայոս Եկեղեցոյ մէջ, Պատարագեց Հոգշ. Տ. Սեան Վրզ. Ե քարոզեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս., խօսելով Ս. Նիկողայոսի կեանքին ու վարքին մասին:

● Կիր. 21 Դեկտ. — Բարեկենդան Ս. Յակոբայ պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Վրզ. Պալեան:

— Յղութեան հանդիսաւոր նախատօնակին Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. կողմէ:

● Բշ. 22 Դեկտ. — Յղութիւն Ս. Ասուածամօր: Առաւօտուն, Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեանի գլխաւորութեամբ, Միարան Հայրերին քննաշարժերով մեկնեցան Գեթսեմանի ձորը ու շէրաշափառով մուտք գործեցին Ս. Ասուածամանայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:

● Ուր. 26 Դեկտ. — Նախատօնակին Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Շահէ Արքեպս.:

● Եր. 27 Դեկտ. — Ս. Յակոբայ Մքնայ հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխազրի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում

ձում Արզ. Քէշիշեան: Վերաբերուեմը կատարուեցաւ եկեղեցոյ դասին մէջ, սուրբին նկարով շինուած շարժական սեղանին վրայէն:

● Կիր. 28 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբ, Ս. Յովհ. Կարապետի Խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեան Վրզ. Դարիպեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Եշ. 3 Յուլիս. — Ս. Ուխտիս Միարան եւ Գորտոպայի Արժէնթին) Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Տաթև Ծ. Վրզ. Դարիպեան ժամանեց Սուրբ Աթոռ եւ վերադարձաւ շարժ մը ետք:

● Ուր. 4 Յուլիս. — Ամերիկայի Միացեալ Նահանգաց անկախութեան 204րդ տարեդարձի առթիւ, Ամերիկեան Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատարագ Հայրը, Գիւանապետ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Ե Տիրար Գ. Հինդլեան:

● Բշ. 14 Յուլիս. — Ֆրանսական Յեղափոխութեան 191րդ տարեդարձի առթիւ, Ֆրանսական Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան եւ Հոգշ. Տ. Ասպետ Վրզ.:

● Կիր. 3 Օգոստ. — Հոգշ. Տ. Անուշաւան Վրզ. Զղջանեան ներկայ գտնուեցաւ Ասորոց Ս. Մարկոս Եկեղեցոյ մէջ, Անտիօքի Համայն Ասորոց Պատրիարք Մար Իգնատիոս Եագուպ Գ. ի մահուան քաւասունքին առթիւ կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին:

● Ուր. 22 Օգոստ. — Ս. Ուխտիս երիտասարդ Միարաներէն Հոգշ. Տ. Կոմիտաս Արզ. Շէրպէթեան աւարտած ըլլալով աստուածաբանական եռամեայ իր դասընթացը ի Գանատա, վերադարձաւ Ս. Աթոռ: Ներկայիս ան կը հետեւի Institute of Holy Land Studies ի դասընթացքին:

● Բշ. 25 Օգոստ. — Ս. Աթոռ ժամանեց Կրեւտէի Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Յովսէփ Բ՛յ. Հալաւեան եւ վերադարձաւ երկու շարժ ետք:

● Դշ. 9 Սեպտ. — Երեկոյեան, Russian Compound ի մէջ, Համայն Ռուսաց Պատրիարք Պիմէնի անուան տնին առթիւ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան, Հոգշ. Տ. Սեան Վրզ. Դարիպեան, Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ասպետ Վրզ. Պալեան եւ Տիրար Գեորգ Հինդլեան:

● Բշ. 15 Սեպտ. — Առաւօտուն, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միարանութեան, բացուեմը կատարեց Ժառ. Վարժ. ի Ընծայարանի 1980-81 դպրոցական տարեըջանին:

● Բշ. 29 Սեպտ. — Հրէից Սուրբ Սուրբ (Տաղաւարահարաց) տօնին առթիւ, Քաղաքապետարանի կողմէ Դաւթի բերդին մէջ տրուած

ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. և Նոզշ. Տ. Բարսեղ Արեղայ:

● Եշ. 2 Նոկտ. — Կալիկաթայէն Ս. Աթոռ ժամանեց Գերշ. Տ. Արիս Եպս. Երբվանեան, որ առեն մը պիտի մնայ մեր մէջ:

● Բշ. 6 Նոկտ. — Արժ. Տ. Ներսէս Քչյ. ձեպէճեան Նիւ Եոթքէն ժամանեց Սուրբ Աթոռ, ստանձնելու համար Տեսչութիւնը Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանին և Բնծայարանին, փոխան Տ. ար Փայլակ Անթապեանին, որ քառամեայ պաշտօնավարութենէ ետք (նախ իբրև ներքին Տեսուչ, վերջին տարին իբրև Տեսուչ) վերադարձաւ Մայր Հայրենիք:

● Գշ. 7 Նոկտ. — St. John's Ակնարուժարանի մէջ, Խնամակալութեան անդամ Տէր և Տիկին Քէյթ Լիլի ի պատիւ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Նոզշ. Տ. Անուշաւան Վրդ. և Նոզշ. Տ. Բարսեղ Արեղայ:

● Բշ. 13 Նոկտ. — Յոպպէի և Հայֆայի Հոգևոր Հովուութեան պաշտօնը առժամաբար յանձնուեցաւ Ա. Աստուածածնայ Տաճարի Տեսուչ Նոզշ. Տ. Հայրիկ Արդ. Գայլայճեանի, փոխան Նոզշ. Տ. Նուրհան Վրդ. Մանուկեանի, որ երէկ մեկնեցաւ Ալմէլօ, Հոլանտա, իբրև առաջին հովիտը տեղւոյն փոքրաթիւ գաղութին: Իսկ Նոզշ. Տ. Բարսեղ Արդ. Գայլէմտէրեան հրատարած ըլլալով Մատակարարութեան իր պաշտօնէն, Ս. Հրեշտակապետաց Վանքի Տեսուչ Նոզշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեանը վերըստին կոչուեցաւ այդ պաշտօնին:

● Գշ. 14 Նոկտ. — Գիշերուան ժամը 10ին, Ս. Յարութեան Տաճարի մեր Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ ծագեցան հրդեհ, որուն զոհ գնաց Տաճարին փռաւոր նկարներէն մին:

● Բշ. 20 Նոկտ. — Ծանօթ բանասէր Փրօֆ. Յ. Ս. Անասեան Քայիֆորնիայէն ժամանեց Երուսաղէմ, ուր իր անցուցած մօտ երկու ամիսներու ընթացքին հրատարակեց ուսումնասիրութիւն մը Ստեփանոս Սալմաստեցի Կաթողիկոսի մասին, որը կը հրատարակուի նաև Սինոի մէջ:

● Գշ. 22 Նոկտ. — Նօթը Տամի կեդրոնական մատրան մէջ, Ն. Սրբութիւն Յովհ. Պօղոս Բ. Պապի գահակալութեան 2րդ տարեդարձի առթիւ կատարուած Գոհաբանական Մաղթանքին ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Նոզշ. Տ. Ասպետ Վրդ. և Տիար Գ. Հինդլեան:

● Կիր. 26 Նոկտ. — Նոր Երուսաղէմի Y. M. C. A. ի աւագ մուտքի քարեղարկման գործադրութիւններու աւարտման առթիւ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Նոզշ. Տ. Ասպետ Վրդ., Արժ. Տ. Ներսէս Քչյ. և Տիար Գեորգ Հինդլեան:

— Նոյն օրը, Իւրալիի Նախագահ Իցնաք Նալօնի եգիպտոսի տալիք առաջին այցելութեան առթիւ Պէն Կուրեծ օգակայան ողջերթ մարտիլու գնաց Նոզշ. Տ. Անուշաւան Վրդ.:

● Բշ. 27 Նոկտ. — Քրիստոնեայ համայնքներու գործառնութեանց Կրօնից Նախարարութեան Տնօրէն Պր. Ռօզէն այցելեց Ամեն. Ս. Պատրիարք Լօր:

● Գշ. 28 Նոկտ. — Ս. Ուխտիս երիտասարդ Միարաններէն Նոզշ. Տ. Արփիար Արդ. Տէմրճեան վերադարձաւ Ս. Աթոռ, Պելճիքայի մէջ (Լուլէյնի, Համալսարան) իր առած երկամեայ ուսման աւարտին: Ներկայիս ան կը հետևի Ecole Bibliqueի գասընթացքներուն:

● Եշ. 30 Նոկտ. — Ն. Վսեմ. Նախագահին վերադարձին առթիւ, օգակայան զիմաւորութեան գնաց Գերշ. Տ. Շահէ Արքեպս.:

● Ուր. 31 Նոկտ. — Լուսաբական Եկեղեցւոյ մէջ, Reformation Dayի 450րդ տարեդարձի առթիւ կատարուած արարողութեան ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Շահէ Արքեպս.:

● Ուր. 7 Նոյեմ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Նախագահեց Հ. Մ. Բ. Մ. Ս. Ակումբին մէջ Հ. Յ. Գաշակցութեան Հիմնարկութեան 90ամեակի հանդէսին և ըրաւ փակցման խօսքը:

● Բշ. 10 Նոյեմ. — Կէսօրէ առաջ, Ֆրանչիսկեանց Միարանութեան Նոր Մեծաւորին (Կիւսթոս) զիմաւորութեան, Յոպպէի զբան մօտ, ներկայ եղաւ Գերշ. Տ. Շահէ Արքեպս.: Նոր Կիւսթոսը, Հայր Իկնաղիօ Մանչինի, ծանօթ դէմք մըն է քաղաքի քրիստոնեայ հասարակութեան և սիրուած բարեմէ: Անցեալ տարուան Ապրիլի 24ին բանախօսած էր Մեծ Եղեռնի և հայ ցեղասպանութեան մասին:

— Կէսօրէ ետք, Գերապատու Կիւսթոսը շրջափառուով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ձանազան համայնքներու ներկայացուցիչներու կարգին, մեր կողմէ ներկայ էին Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. և Նոզշ. Տ. Ասպետ Վրդ.:

● Կիր. 16 Նոյեմ. — Նոզշ. Տ. Անուշաւան Վրդ. Ջոջանեան ներկայ գտնուեցաւ Յոյն-Կաթողիկոսներու Նազարէթի Եպիսկոպոս Մաքսիմոս Սալլուսի կողմէ կատարուած երկու քահանաներու ձեռնադրութեան իրենց եկեղեցիին մէջ:

● Գշ. 19 Նոյեմ. — Աւստրալիոյ Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գաղանճեան ժամանեց Ս. Աթոռ և մեկնեցաւ քանի մը օրեր ետք:

● Եր. 29 Նոյեմ. — Երեկոյեան, Սկոտական St. Andrew's Եկեղեցւոյ հիմնարկութեան յիսնամեակի առթիւ, Scottish Hospiceի մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Նոզշ. Տ. Ասպետ Վրդ., Արժ. Տ. Ներսէս Քահանայ և Տիար Գեորգ Հինդլեան:

● Կիր. 30 Նոյեմ. — Նոյն առիթով, Սկոտական Եկեղեցւոյ մէջ կէսօրէ առաջ կատարուած մասնաւոր արարողութեան և ընդունելութեան ներկայ եղան Նոզշ. Տ. Անուշաւան Վրդ. Ջոջանեան և Նոզշ. Տ. Մեհրոպ Արեղայ Մոթաֆեան:

Տ. ԿՈՄԻՏԱՍ ԱՐՔԵՊՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

1925 — 1980

Դեկտ. 2ին, Ս. Էջմիածնէն Ս. Աթոռ հասած հեռագիր մը կը գումար անժամանակ վախճանումը Մայր Աթոռոյ բարձրատիճան Միաբաններէն Այրարատեան Թեմի բազմամեայ եւ սիրուած Առաջն. Փոխանորդ Գերշ. Տ. Կոմիտաս Արքեպս. Տէր Ստեփանեանի: Հանգուցեալը, հազիւ 55 տարեկան, ատենէ մը ի վեր կը տառապէր արդէն սրտի անկանոնութենէ: Մահն ալ արդիւնքն էր սրտի կաթուածի:

Մայր Աթոռոյ Միաբանութեան հետ ու չափ Ս. Յակոբեանց Միաբանութիւնն ալ սգաւորուած է այս առիթով, ոչ միայն ոյ ուղեւորել իբրեւ անբաժան մասը Հայց. Ս. Եկեղեցիին, ունի զիտակցութիւնը թէ արժէք մըն է որ կը գերեզմանուի իր մահով, այլ նաեւ անոր համար որ Հանգուցեալ Սրբազանը իբրեւ սան եւ Սարկաւազ՝ հոս է որ առած է տարերբը հոգեւորական իր կրթութեան, իր ծննդավայր Դամասկոսէն իբրեւ ժառանգաւոր սան Ստեփան Տէր Ստեփանեան երուսաղէմ զաւրով 1940ին եւ 1945ին Սարկաւազ ձեռնադրուելէ ետք տարի մըն ալ շարունակելով իր ուսումը Ընծայարանի բաժնին մէջ: Յետոյ ընտանեօք ներգաղթած է Հայրենիք, ուր լրացուցած է ընդհատուած իր կրօնական ուսումը աշակերտելով Ս. Էջմիածնի Հոգեւոր ձեմարանին: 1951ին կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ՝ Երազանկայիչատակ Տ. Տ. Գէորգ Զ. Կաթողիկոսէն, իսկ 1957ին՝ Եպիսկոպոս, Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսէն: Շատ չանցած կը նշանակուի Առաջնորդական Փոխանորդ Այրարատեան թեմին, եւ կը վարէ կարեւոր այդ պաշտօնը մինչեւ իր մահը:

Հանգ. Տ. Կոմիտաս Արքեպսան բանիցս եղած է արտասահման, ուղեկցելով Վեհափառ Հայրապետին: 1975ին մաս կազմեց Ս. Աթոռ այցելող Վեհափառի շրջապատին: Հոս եղաւ ան տակաւին անցեալ Օգոստոսին, իբրեւ ներկայացուցիչը Մայր Աթոռոյ Սաղիմական Հոգեւորականներու Համագումարին, եւ բացման նիստին կատարեց ընթերցումը Վեհափառին յղած ողջոյնի եւ օրհնութեան խօսքին:

- Ել. 4 Դեկտ. — Կէսօրէ առաջ, Գերշ. Տ. Արիս Եպս. և Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. ներկայ գտնուեցան Յրանչիսկեաններու Ս. Փրկիչ Մայր Եկեղեցւոյ մէջ, իտալիոյ մէջ վերջերս պատահած երկրաշարժի զոհերուն համար մատուցուած հանգստեան Ս. Պատարագին:
- Գլ. 9 Դեկտ. — Թէլ-Ալլիօլի Շուէտական ղեկավար Տիար Թորոթէն Օրն այցելեց Ամեն. Ս. Պատարագը Զօր:
- Երեկոյեան, Հրէից Խանուկայի տօնին առթիւ, Քաղաքապետ Վսեմ. Թէտի Բսլէքի կողմէ, Քաղաքապետարանի սրահին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիրեղ Եպս. և Հոգշ. Տ. Ասպետ Վրդ.:
- Ել. 18 Դեկտ. — Ս. Ուխտի Միաբաններէն Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Այբաղեան և Հոգշ.

- Տ. Խաթակ Վրդ. Պարսամեան 10 օրուան համար ժամանեցին Ս. Աթոռ: Հայր Վիգէն, Լոնտօնի մէջ աւարտելէ ետք աստուածարանական իր ուսումը, ներկայիս կը գտնուի Ժընև, իբրև Հովիւ Զուրիցերիոյ փոքրաթիւ գաղութին:
- Ուր. 26 Դեկտ. — Եւրոպացւոց Ս. Ինչնդեան տօնին առթիւ, կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատարագը Հայրը, ի գլուխ Միաբանութեան, շնորհաւորական այցելութիւն տուաւ Յրանչիսկեանց Գերշ. Կիրեթոսին և Լատինաց Ամեն. Ս. Պատարագին: Ապա, հետո ունենալով Գերշ. Տ. Շահէ Արքեպս. և Հոգշ. Տ. Ասպետ Վրդ.ը, այցելեց Պապական Նուիրակին և Անկլիէքան Արքեպս.ին, իսկ Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկ., Հոգշ. Հայրերու ընկերակցութեամբ, այցելեց Կաթողիկ և Բողոքական փոքր յարանուանութեանց Հոգեւոր ղեկերուն: